*Հավելված*
*Հաշվեքննիչ պալատի*
*2021թ. ապրիլի 30-ի թիվ 109-Ա որոշման*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ 3-4 էջ
2. ԱՄՓՈՓԱԳԻՐ 5-8 էջ
3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 8- 9 էջ
4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 9-10 էջ
5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ 10_25 էջ
6. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑ 25 էջ
7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 26-27 էջ

# 1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

| | |
|---|---|
| **Հաշվեքննության հիմքը** | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ 22-Ա որոշում: |
| **Հաշվեքննության օբյեկտը** | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: |
| **Հաշվեքննության առարկան** | Մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն: |
| **Հաշվեքննության չափանիշները** | «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշում, ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 163-Ն որոշում, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 730-Ն որոշում, ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշում, ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի մարտի 13-ի թիվ 254-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 1-ի 69-Ա/1 հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հունիսի 30-ի թիվ 79-Ա հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 13-ի թիվ 751-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 30-ի 79-Ա հրաման և կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտեր: |
| **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը** | 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը : |
| **Հաշվեքննության** | 2021 թվականի փետրվարի 16-ից մինչև 2021 թվականի |

| | |
|---|---|
| **կատարման ժամկետը** | ապրիլի 30-ը ներառյալ: |
| **Հաշվեքննության մեթոդաբանությունը** | Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության գործող մեթոդաբանությունների համաձայն:<br>Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը: |
| **Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում** | Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանը: |

## 2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

2.1 Նախարարության կողմից 2020 թվականի տարեկան արդյունքներով իրականացված թվով 79 միջոցառումներից թվով 63 դեպքերում տարեկան ճշտված պլանի նկատմամբ եղել են թերակատարումներ /ընդհանուր կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 90.03%/, ընդ որում թվով 20-ի դեպքում ճշտված պլանով նախատեսվել է ավելի ցածր ցուցանիշ, քան տարեկան հաստատված պլանը, այսինքն կատարվել է հաստատված պլանի նվազեցումներ ընդհուպ մինչև նախատեսվածի 2.1%-ից մինչև 79.5%, իսկ թվով 30-ի դեպքում տարեկան պլանի նկատմամբ ճշտված պլանի փոփոխություններ չեն եղել, թվով 5 միջոցառումների դեպքում կատարվել է հաստատված պլանի նկատմամբ ճշտված պլանի ցուցանիշի ավելացում 5.4%-ից մինչև 639.0%-ի չափով, ինչպես նաև թվով 6 նոր միջոցառումներ, այսինքն երբ հաստատված բյուջեով տարեկան պլանավորում չէր իրականացվել, սակայն ճշտված պլանով սահմանվել են նոր միջոցառումներ և նախատեսվել են գումարներ: Հատկանշական է, որ դրանցից ճշտված պլանի նկատմամբ մի շարք դեպքերում նույնպես առկա են թերակատարումներ, այն դեպքում, երբ տարեկան հաստատված պլանը զգալի չափով նվազեցվել էր: Մասնավորապես.

- 1068-12003 <<Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն>> միջոցառման մասով տարեկան պլանը նվազել է 182,254.0 հազ. դրամով՝ 34.6%-ով, որի պարագայում կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 97.9%, շահառուների պլանային թվաքանակը 1088-ից նվազեցվել է 630-ով՝ ճշտված պլանը կազմելով 458, փաստացին՝ 414:
- 1068-12005 <<Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում>> միջոցառման մասով տարեկան պլանը նվազել է 98,012.3 հազ. դրամով՝ 47%-ով, որի պարագայում կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 93.5 %, շահառուների պլանային թվաքանակը 1000-ից նվազեցվել է 459-ով՝ ճշտված պլանը կազմելով 541, փաստացին՝ 438-ը:
- 1011-11003 <<Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում>> միջոցառման մասով տարեկան պլանը նվազել է 63,403.0 հազ. դրամով՝ 65.3%-ով, որի պարագայում կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 31.9%:
- 1206-11001 <<Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագիր>>

միջոցառման մասով տարեկան պլանը նվազել է 843,035.4 հազ. դրամով՝ 79.5%-ով, որի պարագայում կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 77.8%:

- 1206-32001- <<Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգում>> միջոցառման մասով տարեկան պլանը նվազել է 1,141,770.1 հազ. դրամով՝ 49.7%-ով, որի պարագայում կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 68.6%:

2.2 Մի շարք միջոցառումների դեպքում ՀՀ պետական բյուջեով նախատեսված էին ֆինանսական միջոցներ, սակայն դրանք նախարարության կողմից չեն իրականացվել, այլ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով գումարները տեղափոխվել են ՀՀ պահուստային ֆոնդ, իսկ թվով 3 դեպքերում /1205-12004, 1205-12005, 1205-12007 միջոցառումներ/ ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 1919-Ն որոշման 9.1 հավելվածի թիվ 9.1.20 աղյուսակի համաձայն միջոցառման կատարողը հանդիսացել է նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը: Մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE և LSREP/ համակարգերի շտեմարաններից հանված ըստ կատարողների /ըստ ծրագրերի և միջոցառումների, նշելով հաստատված և ճշտված պլանները, փաստացի և փաստացի ծախսերը, կատարողականները և այլ տվյալներ/ տեղեկատվության համաձայն նշված միջոցառումները ընդգրված է եղել նախարարության բյուջեում և նշվել է նաև հաստատված պլանները, որից հետո ճշտված պլան և կատարողականներ չի նշվել: Համաձայն նախարարության պատասխանատու ստորաբաժանման տեղեկատվության նշված միջոցառումները իրականացվել են նախարարության սոցիալական ապահովության ծառայության կողմից: Արդյունքում կարելի է փաստել, որ /LSFINANCE և LSREP/ համակարգերից նշված միջոցառումների մասով կատարողների վերաբերյալ ստացված տեղեկատվությունը թերի է և չի համապատասխանել իրականությանը:

2.3 ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանվել են նոր ծրագրեր, որոնց գերակշիռ մասում նույնպես առկա են ճշտված պլանի նկատմամբ թերակատարումներ: Ընդ որում թվով 2 դեպքում՝ 1005-11002 «Հայրենական մեծ պատերազմի վետերաններին առողջարանային բուժման ուղեգրերի տրամադրում» և 1032-31003 «18 տարեկանից բարձր տարիքի անձանց համայնքային փոքր տներում խնամքի կազմակերպման համար անշարժ գույքի ձեռքբերում», միջոցառումները ընդհանրապես չեն իրականացվել պատճառաբանելով առաջին դեպքում վետերանների կողմից կորոնավիրուսի պատճառով առողջարանային բուժումից հրաժարվելու և երկրորդ դեպքում՝ նույն

համավարակի պատճառով մրցույթ չանցկացնելու հանգամանքներով: Սակայն տվյալ 2 միջոցառումների պարագաներում մինչև նոր ծրագրեր սահմանելը, նախապես անհրաժեշտ էր հաշվի առնել կատարման իրատեսականությունը՝ համավարակի զարգացման կանխատեսման որևէ պաշտոնական տվյալով պայմանավորված:

2.4 Առկա է դեպք, երբ հաստատված բյուջեով և ճշտված պլանով սահմանված է գումար՝ 1,440. հազ. դրամ, սակայն դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել /1141-12007 բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն/, որը հիմնավորվում է նրանով, որ մանկատան շրջանավարտները հիմնականում ստացել են բնակարանի ձեռքբերման վկայագրեր, ուստի բնակարանի վարձակալության անհրաժեշտություն դեռևս չի եղել:

2.5«Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 միջոցառման համար նախատեսված գումարից << ՀՀ Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 2020 թվականի մարտի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ 10,430,507.5 հազ. դրամ գումարը վերաբաշխվել է բյուջետային համապատասխան մարմիններին: Հատկանշական է, որ 2019 թվականի պետական բյուջեի պլանավորումն նույնպես իրականացվել էր նույն սկզբունքով: Արդյունքում թերի հիմնավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 միջոցառման մասով նախարարության կողմից բյուջեի պլանավորման նման մոտեցումը, առավել ևս որ ի սկզբանե ակընհայտ էր, որ այդ գումարները հետագայում բաշխվելու էին բյուջետային համապատասխան այլ կարգադրիչներին:

2.6 Ընդհանուր առմամբ նախարարության կողմից ՀՀ պետական բյուջեի 3, 6 և 9 ամիսների կատարման նկատմամբ իրականացված հաշվեքննությունների ընթացքում արձանագրվել էին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2–ում նշված մի շարք ցուցանիշների անհամապատասխանություններ: Մասնավորապես 1-ին եռամսյակում արձանագրվել էր թվով 18 ծրագրային միջոցառումներ՝ 86,641.88 հազ. դրամի կատարողականների չափով, վեց ամիսների համար արձանագրվել էր թվով 19 միջոցառումներ՝ 154,028,69 հազ. դրամի կատարողականների չափով, Ինն ամիսների համար արձանագրվել էր թվով 8 միջոցառումներ՝ 167,294.39 հազ. դրամի կատարողականների չափով, որոնք չէին ընդգրկվել նշված ժամանակաշրջաններում համապատասխան միջոցառումների Ձև-2

հաշվետվությունների փաստացի ծախսերի ցուցանիշներում: Միևնույն ժամանակ նշված ժամանակաշրջանների ընթացիք եզրակացությունները կազմելիս արված առաջարկությունների մասով նախարարությունը տեղեկացրել է, որ ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ համապատասխան հրամաններ, հանձնարարականներ, արձանագրված անհամապատասխանությունները և թերությունները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում ուսումնասիրելով 2020 թվականի տարեկան կատարման ցուցանիշների համապատասխանությունը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2–ում նշված ցուցանիշների հետ, անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

2.7 Վերլուծելով Նախարարության 3, 6 և 9 ամիսների ու դրանց համատեքստում 2020 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան արդյունքների թերակատարումների ցուցանիշները ճշտված պլանների նկատմամբ կարելի է փաստել, որ չդիտարկելով ըստ եռամսյակների համամասնությունների հաստատված պլանների նկատմամբ ճշտված պլանների մի շարք միջոցառումների գծով նվազեցումները (2.1%-79.5%), տարվա կտրվածքով առկա է դրամարկղային և փաստացի ծախսերի կատարման ավելի բարձր ցուցանիշներ /90.03% և 91.78% /, քան նախորդող բաղկացուցիչ եռամսյակներում: Մասնավորապես

- Առաջին եռամսյակում դրամարկղային ծախսի կատարման տոկոսը առաջին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել էր 53.7 տոկոս, փաստացի ծախսի կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 74.6 տոկոս:
- Վեց ամիսների դրամարկղային ծախսի կատարման տոկոսը վեց ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 54.5 տոկոս, փաստացի ծախսի կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 66.0 տոկոս:
- Ինն ամիսների դրամարկղային ծախսի կատարման տոկոսը ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 60.31 տոկոս, փաստացի ծախսի կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել 70.02 տոկոս:

## 3 ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում: Ուսումնասիրելով ներկայացված տեղեկատվությունը, օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE և LSREP/ համակարգերի շտեմարաններից, ինչպես նաև հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

ՀՀ տարածքում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված հանգամանքները զգալի դժվարություններ են առաջացրել հաշվեքննությունն ըստ ծրագրերի և միջոցառումների կատարման ռիսկերի ամբողջական և համակողմանի գնահատման գործընթացում: Հաշվի առնելով այդ հանգամանքը, 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի հաշվեքննության իրականացման համար որպես ռիսկային խնդիր է դիտարկվել՝ նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականի թերակատարումների և բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալները մասնակի ընդգրկելու, իսկ որոշ դեպքերում առհասարակ չներառելու խնդիրները:

**ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան (օգտագործելով՝ բյուջեի երեք, վեց և ինն ամիսների) մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ կատարված հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:**

## 4 ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2020 թվականի ՀՀ պետական բյուջեով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը նախատեսվել է ֆինանսավորել 31,339,021.1 հազ. դրամ, ճշտված բյուջեով նախատեսվել է 17,249,453.94 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 14,089,567.16 հազ. դրամի նվազեցում 44.96%-ի չափով: Փաստացի ֆինանսավորվել է 15,374,038.26 հազ. դրամ կամ 89.1%, դրամարկղային ծախսը կազմել է 15,528,823.67 հազ. դրամ կամ 90.0%, փաստացի ծախսը՝ 15,831,999.32, հազ. դրամ՝ 91.8%, դեբիտորական պարտքը կազմել է

տարեսկզբին 2,064,305.17 հազ. դրամ, տարեվերջին՝ 1,702,545.65 հազ. դրամ, կրեդիտորական պարտքերը տարեսկզբին կազմել է 5,769.4 հազ. դրամ, տարեվերջին՝ 9,083.22 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները ըստ ծրագրերի և միջոցառումների ներկայացվում է կից հավելված 1-ով՝ բյուջետային ծրագրերի աղյուսակի տեսքով, որտեղ ներկայացված է նաև անհամապատասխանության վերաբերյալ գրառումները:

## 5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված 2020թ. պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերի վերաբերյալ.**

2020 թվականի ՀՀ պետական բյուջեով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը նախատեսվել է ֆինանսավորել 31,339,021.1 հազ. դրամ, ճշտված բյուջեով նախատեսվել է 17,249,453.94 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 14,089,567.16 հազ. դրամի նվազեցում 44.96%-ի չափով: Նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 ծրագրով նախատեսված գումարից << ՀՀ Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 2020 թվականի մարտի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ 10,430,507.5 հազ. դրամ գումարը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ, ինչպես նաև մի շարք ծրագրեր ՀՀ կառավարության որոշումներով այլ գերատեսչությունների կատարմանը տեղափոխելու հանգամանքով: Ընդ որում նշված միջոցառման մասով տարեկան պլանը կազմել է 10,619,496.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 188,988.5 հազ. դրամ: Հատկանշական է, որ 2019 թվականին նույնպես պլանավորումն իրականացվել էր նույն սկզբունքով՝ հաստատված պլանը կազմել է 10,619,496.0 հազ. դրամ, այնուհետև այն նվազեցվել էր 10,410,264.0 հազ. դրամով կազմելով 209,232.0 հազ. դրամ:

Արդյունքում «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 միջոցառման մասով նախարարության կողմից բյուջեի պլանավորման նման մոտեցումը թերի հիմնավորված է, առավել ևս որ ի սկզբանե ակընհայտ էր, որ այդ գումարները հետագայում բաշխվելու էին բյուջետային համապատասխան մարմիններին:

Փաստացի ֆինանսավորվել է 15,374,038.26 հազ. դրամ կամ 89.1%, դրամարկղային ծախսը կազմել է 15,528,823.67 հազ. դրամ կամ 90.0%, փաստացի ծախսը՝ 15,831,999.32, հազ. դրամ՝ 91.8%, դեբիտորական պարտքը կազմել է տարեսկզբին 2,064,305.17 հազ. դրամ, տարեվերջին՝ 1,702,545.65 հազ. դրամ, կրեդիտորական պարտքերը տարեսկզբին կազմել է 5,769.4 հազ. դրամ, տարեվերջին՝ 9,083.22 հազ. դրամ:

Այդ թվում

*«Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ»* ծրագրի տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել է 2,572,065.8 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 2,502,212.0 հազ. դրամ կամ 97.3%, դրամարկղային ծախսը կազմել է 2,480,332.06 հազ. դրամ կամ 96.4%, փաստացի ծախսը՝ 2,481,533.47 հազ. դրամ՝ 96.5%, այդ թվում՝

*«Աշխատանքի վարձատրություն»* հոդվածով տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել է 2,373,915.6 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 2,345,628.71 հազ. դրամ կամ 98.8%, դրամարկղային ծախսը կազմել է 2,324,850.39 հազ. դրամ կամ 97.9%, փաստացի ծախսը՝ 2,324,969.5 հազ. դրամ՝ 97.9%:

*«Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում»* հոդվածով տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել է 194,733.8 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 153,166.91 հազ. դրամ կամ 78.6%, դրամարկղային ծախսը կազմել է 152,121.51 հազ. դրամ կամ 78.1%, փաստացի ծախսը՝ 153,307.71 հազ. դրամ՝ 78.7%:

*«Դրամաշնորհներ»* հոդվածով տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել է 382.6 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 382.6 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է ՝ 371.81 հազ. դրամ՝ 97.2%:

*«Այլ ծախսեր»* հոդվածով տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել, փաստացի ֆինանսավորվել է 3,033.8 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 2,988.35 հազ. Դրամ՝ 98,5%, փաստացի ծախսը՝ 2,885,45 հազ. դրամ՝ 95.1%:

Ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների ծախսերի հաշվեքննությամբ արձանագրվեց, որ Նախարարության դեբիտորական պարտքերը՝ 01.01.2020 թվականի դրությամբ կազմել է 6,073.9 հազ. դրամ: Տարեվերջին այն աճել է և կազմել՝ 8,259,56 հազ. դրամ կամ 135.98%: Կրեդիտորական պարտքերը՝ 01.01.2020 թվականի դրությամբ կազմել է 5,693.95 հազ. դրամ, որը տարեվերջին աճել և կազմել է 9,081.02 հազ. դրամ կամ 159.5%:

**Դեբիտորական պարտքերի աճի հիմնական հոդվածներն են՝**

*«Տրանսպորտային նյութեր»* հոդվածով տարեսկզբին ունենալով 2,687.89 հազ. դրամ դեբիտորական պարտք դրամարկղային ծախս է կատարել՝ 13,989.47 հազ. դրամ՝ 10,435.56 հազ. դրամ փաստացի ծախսի պարագայում, տարեվերջին առաջացնելով 6,241.81 հազ. դրամ դեբիտորական պարտք:

**Կրեդիտորական պարտքերի աճի հիմնական հոդվածներն են՝**

*«Էներգետիկ ծառայություններ»* հոդվածով տարեսկզբին ունենալով 3,221.71 հազ. դրամ կրեդիտորական պարտք դրամարկղային ծախս է կատարել՝ 28,500.8 հազ. դրամ՝ 30,565.87 հազ. դրամ փաստացի ծախսի պարագայում, տարեվերջին առաջացնելով 5,632,67 հազ. դրամ կրեդիտորական պարտք:

*«Կոմունալ ծառայություններ»* հոդվածով տարեսկզբին ունենալով 136.23 հազ. դրամ կրեդիտորական պարտք դրամարկղային ծախս է կատարել՝ 583.09 հազ. դրամ՝ 997.45 հազ. դրամ փաստացի ծախսի պարագայում, տարեվերջին առաջացնելով 550.59 հազ. դրամ կրեդիտորական պարտք:

*«Կապի ծառայություններ»* հոդվածով տարեսկզբին ունենալով 1,083.62 հազ. դրամ կրեդիտորական պարտք դրամարկղային ծախս է կատարել՝ 20,162.11 հազ. դրամ՝ 21,468.75 հազ. դրամ փաստացի ծախսի պարագայում, տարեվերջին առաջացնելով 2,390.26 հազ. դրամ կրեդիտորական պարտք և այլն:

**2020 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված, սակայն չկատարված ծրագրեր.**

1. *«Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում»* **(1088-11002)** ծրագրով նախատեսվել է 7,000,0 հազ. դրամ: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել: ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1794-Ն որոշմամբ ծրագիրը հանվել է և գումարը տեղափոխվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ:
2. *«Անավարտ շինարարության, բնակարանաշինական կոոպերատիվների փայատերերի կողմից ԽՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց փոխհատուցում»* **(1184-12002)** ծրագրով նախատեսվել է 730,880,8 հազ. դրամ: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել: ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 948-Ն որոշմամբ ծրագիրը հանվել է և գումարը տեղափոխվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ:

3.*«Աջակցություն հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհվածների ընտանիքներին»* **(1205-12004)** ծրագրով նախատեսվել է 420,000,0 հազ. դրամ: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել: Հարկ է նշել, որ 2019 թվականի դեկտեմբերի 26 <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 1919-Ն որոշման 9.1 հավելվածի թիվ 9.1.20 աղյուսակի համաձայն միջոցառման կատարողը հանդիսացել է նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը: Մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE և LSREP/ համակարգերի շտեմարաններից հանված ըստ կատարողների՝ նախարարության բյուջեում /ըստ ծրագրերի և միջոցառումների, նշելով հաստատված և ճշտված պլանները, փաստացի և փաստացի ծախսերը, կատարողականները և այլ տվյալներ/ նշված միջոցառումը ընդգրված է եղել և նշվել է նաև հաստատված պլանը՝ 420,000,0 հազ. դրամ, որից հետո ճշտված պլան և կատարողականներ չի նշվել: ՀՀ կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 1628-Ն որոշմամբ հաստատված պլանը նվազեցվել է 320,000.0 հազ. դրամով՝ ճշտված պլանը սահմանելով 100,000.0 հազ. դրամ: Համաձայն նախարարության պատասխանատու ստորաբաժանման տեղեկատվության նշված միջոցառումը իրականացվել է նախարարության սոցիալական ապահովության ծառայության կողմից: Արդյունքում կարելի է փաստել, որ /LSFINANCE և LSREP/ համակարգերից նշված միջոցառման մասով կատարողների վերաբերյալ ստացված տեղեկատվությունը թերի է և չի համապատասխանել իրականությանը:

4.*«Աջակցություն զոհվածների ընտանիքներին»* **(1205-12005)** ծրագրով նախատեսվել է 550,000.0 հազ. դրամ: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել: Հարկ է նշել, որ 2019 թվականի դեկտեմբերի 26 <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 1919-Ն որոշման 9.1 հավելվածի թիվ 9.1.20 աղյուսակի համաձայն միջոցառման կատարողը հանդիսացել է նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը: Մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE և LSREP/ համակարգերի շտեմարաններից հանված ըստ կատարողների՝ նախարարության բյուջեում /ըստ ծրագրերի և միջոցառումների, նշելով հաստատված և ճշտված պլանները, փաստացի և փաստացի ծախսերը, կատարողականները և այլ տվյալներ/ նշված

միջոցառումը ընդգրված է եղել և նշվել է նաև հաստատված պլանը՝ 550,000.0 հազ. դրամ, որից հետո ճշտված պլան և կատարողականներ չի նշվել: Համաձայն նախարարության պատասխանատու ստորաբաժանման տեղեկատվության նշված միջոցառումը իրականացվել է նախարարության սոցիալական ապահովության ծառայության կողմից: ՀՀ կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 1628-Ն, նոյեմբերի 16-ի թիվ 1797-Ն, դեկտեմբերի 10-ի թիվ 2030-Ն և դեկտեմբերի 25-ի թիվ 2190-Ն որոշումներով՝ ավելացնելով պլանը համապատասխանաբար 320,000.0 հազ. դրամով, 901,847.6 հազ. դրամով, 1,264,256.0 հազ. դրամով և 88,464.0 հազ. դրամով՝ ճշտված պլանը սահմանելով 3,124,567.6 հազ. դրամ: Արդյունքում կարելի է փաստել, որ /LSFINANCE և LSREP/ համակարգերից նշված միջոցառման մասով կատարողների վերաբերյալ ստացված տեղեկատվությունը թերի է և չի համապատասխանել իրականությանը:

5. *«ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, ավագ և ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին սոցիալական աջակցություն»* **(1205-12007)** ծրագրով նախատեսվել է 12,655.6 հազ. դրամ: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել: Հարկ է նշել, որ 2019 թվականի դեկտեմբերի 26 <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 1919-Ն որոշման 9.1 հավելվածի թիվ 9.1.20 աղյուսակի համաձայն միջոցառման կատարողը հանդիսացել է նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը: Մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE և LSREP/ համակարգերի շտեմարաններից հանված ըստ կատարողների՝ նախարարության բյուջեում /ըստ ծրագրերի և միջոցառումների, նշելով հաստատված և ճշտված պլանները, փաստացի և փաստացի ծախսերը, կատարողականները և այլ տվյալներ/ նշված միջոցառումը ընդգրված է եղել և նշվել է նաև հաստատված պլանը՝ 12,655.6 հազ. դրամ, որից հետո ճշտված պլան և կատարողականներ չի նշվել: Համաձայն նախարարության պատասխանատու ստորաբաժանման տեղեկատվության նշված միջոցառումը իրականացվել է նախարարության սոցիալական ապահովության ծառայության կողմից՝ Ճշտված պլանը կազմել է 12,655.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 3,186.7 հազ. դրամ: Արդյունքում կարելի է փաստել, որ /LSFINANCE և LSREP/ համակարգերից նշված միջոցառման մասով կատարողների վերաբերյալ ստացված տեղեկատվությունը թերի է և չի համապատասխանել իրականությանը:

**Հաշվեքննության օբյեկտի ներկայացրած պարզաբանումները և դրանց վերաբերյալ հաշվեքննողների արձագանքը**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 16.04.2021թ. ՄԱ/16698-2021 գրությամբ ներկայացվել է պարզաբանում <<ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության վերաբերյալ>> հաշվեքննության արձանագրության վերաբերյալ:

**Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները-** 2020 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված, սակայն չկատարված ծրագրերի մասով նշվել է, որ

Կետ 3. Արձանագրության մեջ ամրագրված փաստը չի բխում ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշման թիվ 9.1 հավելվածի թիվ 9.1.20 աղյուսակից, որի համաձայն՝ 1205 ծրագրի 12004 միջոցառման կատարողը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունն է, ինչը ամրագրված է նաև ՀՀ կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 1628-Ն որոշման թիվ 4 հավելվածում:

ՀՀ կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 1628-Ն որոշմամբ ոչ թե փոխվել է միջոցառման կատարողը, այլ պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ 1205 ծրագրի 12004 միջոցառումից 320.0 մլն դրամ տեղափոխվել է 1205 ծրագրի 12005 միջոցառում, որի շրջանակներում ֆինանսավորվում է մահացած /զոհված/ զինծառայողների հուղարկավորության /700.0 հազ. դրամ/, ինչպես նաև գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի /1,400.0 հազ. դրամ/ փոխհատուցումը:

Կետ 4. Նախորդ կետի վերաբերյալ դիտողությունը վերաբերում է նաև 1205 ծրագրի 12005 միջոցառմանը: Բացի դրանից հարկ է նշել, որ այս միջոցառման գծով ծրագրային ցուցանիշն ավելացնելն պայմանավորված է պատերազմական գործողությունների հետևանքով համապատասխան ծախսերի աննախադեպ աճով: Հարկ է նշել, որ 1.3 մլրդ դրամը և 88.5 մլն դրամը հատկացվել են տարեվերջին և ժամկետի սղության պատճառով չեն ծախսվել:

Կետ 5. ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշման թիվ 9.1 հավելվածի թիվ 9.1.20 աղյուսակով 1205 ծրագրի 12007 միջոցառման կատարողն ի սկզբանե եղել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը, որը հաստատված է նաև պետական բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի թիվ 1919-Ն որոշմամբ:

Ընդ որում, տարվա ընթացքում միջոցառման գծով փոփոխություններ չեն եղել:

**Հաշվեքննողների արձագանքը կետ 3, կետ 4 և կետ 5-ի վերաբերյալ**

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացվել է պարզաբանումներ նախարարության սոցիալական ապահովության ծառայության կողմից 1205 ծրագրի 12004, 12005 և 12007 միջոցառումների կատարման պլանային ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ: Իսկ ինչ վերաբերվում է նրան, որ ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշման թիվ 9.1 հավելվածի թիվ 9.1.20 աղյուսակով որպես նշված միջոցառումների կատարող հանդիսանում է նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը, նշենք, որ ընդունելով նշված հանգամանքը, միևնույն ժամանակ պետք է փաստել, որ_ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE և LSREP/ համակարգերի շտեմարաններից հանված ըստ կատարողների /ըստ ծրագրերի և միջոցառումների, նշելով հաստատված և ճշտված պլանները, փաստացի և փաստացի ծախսերը, կատարողականները և այլ տվյալներ/ տեղեկատվության համաձայն նշված միջոցառումները ընդգրված է եղել նախարարության բյուջեում և նշվել է նաև հաստատված պլանները, որից հետո ճշտված պլան և կատարողականներ չեն նշվել: Կարծում ենք նպատակահարմար կլինի նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությունից հայցել համապատասխան պարզաբանում՝ հետագայում նմանատիպ անհամապատասխանություններից խուսափելու նպատակով:

**2020 թվականին՝ ՀՀ կառավարության որոշումներով սահմանված նոր ծրագրեր.**

1. կառավարության 07.05.2020 թվականի թիվ 711-ն որոշմամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացվել է 4,320.0 հազ. դրամ՝ *«Հայրենական մեծ պատերազմի վետերաններին առողջարանային բուժման ուղեգրերի տրամադրում»* **(1005-11002)** ծրագրով գործառույթների իրականացման համար: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության ,,Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի նախատեսվել է սպասարկել 30 շահառուի, սակայն ծրագիրը չի իրականացվել պայմանավորված Հայրենական մեծ

պատերազմի վետերանների, առողջարանային բուժման ուղեգրերից հրաժարվելու հանգամանքով (կապված կորոնավիրուսային համաճարակի հետ):

2. ՀՀ կառավարության 17.11.2020 թվականի թիվ 1803-ն որոշմամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացվել է 31,946.9 հազ. դրամ՝ *«Ռազմական դրությամբ պայմանավորված ԱՀ-ի քաղաքացիներին ժամանակավոր կացարանի տրամադրման ծառայություններ»* **(1032-11013)** ծրագրով գործառույթների իրականացման համար: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության ,,Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի խնամվողների թիվ նախատեսվել է 200, փաստացին կազմել է 160, դրամարկղային ծախսը կազմել է 28,200.1 հազ. դրամ, կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 88.3%, պայմանավորված է շահառուների փաստացի թվաքանակով:

3. ՀՀ կառավարության 12.03.2020 թվականի թիվ 281-ն որոշմամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացվել է 21,246,4 հազ. դրամ՝ *«18 տարեկանից բարձր տարիքի անձանց համայքային փոքր տներում խնամքի կազմակերպման համար անշարժ գույքի ձեռքբերում»* **(1032-31001)** ծրագրով գործառույթների իրականացման համար: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության ,,Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի նախատեսվել է 1 առանձնատների ձեռքբերում, փաստացին՝ 1, դրամարկղային ծախսը կազմել է 15,974.0 հազ. դրամ, կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 75.2% /մրցույթի արդյունքում եղել է տնտեսում/:

4. ՀՀ կառավարության 12.03.2020 թվականի թիվ 281-ն որոշմամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացվել է 2,887.5 հազ. դրամ՝ *«18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի համայքային փոքր տների շենքային պայմանների բարելավում»* **(1032-31002)** ծրագրով գործառույթների իրականացման համար: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության ,,Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի նախատեսված է նախագծանախահաշվային փաստաթղթերի քանակը 1, փաստացին՝ 1,

դրամարկղային ծախսը կազմել է 2,363.0 հազ. դրամ, կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 81.8%, /մրցույթի արդյունքում եղել է տնտեսում/:

5. ՀՀ կառավարության 28.10.2020 թվականի թիվ 1737-ն որոշմամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացվել է 19,826.0 հազ. դրամ՝ *«18 տարեկանից բարձր տարիքի անձանց համայնքային փոքր տներում խնամքի կազմակերպման համար անշարժ գույքի ձեռքբերում»* **(1032-31003)** ծրագրով գործառույթների իրականացման համար: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության ,,Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի նախատեսվել է առանձնատների ձեռքբերում 1 հատ, փաստացին. 0, դրամարկղային ծախսը՝ 0, սակայն ծրագիրը չի իրականացվել՝ երկրում ստեղծված կորոնավիրուսային համավարակի պատճառով մրցույթ չի հայտարարվել:

6. ՀՀ կառավարության 15.06.2020 թվականի թիվ 962-ն որոշմամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացվել է 156,422.0 հազ. դրամ՝ *«Կորոնավիրուսային վարակի կանխարգելման, վերահսկման և այլ միջոցառումների իրականացման շրջանակերում տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ..»* **(1032-11012)** ծրագրով գործառույթների իրականացման համար: ՀՀ կառավարության 09.12.2020 թվականի թիվ 1996-ն որոշմամբ՝ գումարը պակասեցվել 44,631.0 հազ. դրամով: ՀՀ կառավարության 21.12.2020 թվականի թիվ 2121-ն որոշմամբ՝ գումարը պակասեցվել 25,000.0 հազ. դրամով: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության ,,Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի խնամվողների թիվը նախատեսվել է 100, փաստացին կազմել է 39, դրամարկղային ծախսը կազմել է 37,833.1 հազ. դրամ, կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 69.0%, / պայմանավորված է նախատեսվածից քիչ խնամվող շահառուների թվաքանակով/:

7. ՀՀ կառավարության 09.12.2020 թվականի թիվ 1996-ն որոշմամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացվել է 44,631.0 հազ. դրամ՝ *«Ռազմական դրությամբ պայմանավորված ՀՀ համայնքներում հրետակոծության հետևանքով քաղաքացիների անշարժ գույքին հասցված վնասի*

*փոխհատուցում»* **(1205-12013)** ծրագրով գործառույթների իրականացման համար: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության ,,Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի նախատեսվել է փոխհատուցել 74 շահառուի, փաստացին կազմել է 71, դրամարկղային ծախսը կազմել է 44,498.97 հազ. դրամ, կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 99.7%, / պայմանավորված շահառուների փաստացի թվաքանակով/:

8. ՀՀ կառավարության 21.12.2020 թվականի թիվ 2121-ն որոշմամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացվել է 25,000.0 հազ. դրամ՝ *«Ռազմական դրությամբ պայմանավորված ՀՀ պետ. բյուջեից Արցախի քաղաքացիներին հատկացվող դրամական աջակցությունների գումարները Արցախում փրամադրման ապահովում»* **(1205-12017)** ծրագրով գործառույթների իրականացման համար: Դրամարկղային ծախսը կազմել է 25,000.0 հազ. դրամ:

9. ՀՀ կառավարության 24.12.2020 թվականի թիվ 2192-ն որոշմամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացվել է 500,000.0 հազ. դրամ՝ *«Ռազմական դրությամբ պայմանավորված դրամական աջակցություն անհայտ կորած զինծառայողներին»* **(1205-12018)** ծրագրով գործառույթների իրականացման համար: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության ,,Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի նախատեսվել է դրամական աջակցություն ցուցաբերել 278 ընտանիքների, փաստացին կազմել է 278, դրամարկղային ծախսը կազմել է 500,000.0 հազ. դրամ:

Վերլուծվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների կատարման վերաբերյալ տվյալները: Արդյունքում արձանագրվել է, որ ծրագրային միջոցառումների ճնշող մեծամասնությունում դրամարկղային և փաստացի ծախսերի մասով առկա է ճշտված պլանի նկատմամբ թերակատարումներ: Հիմնականում որպես թերակատարման պատճառ նշվել է ՀՀ տարածքում համավարակի /COVID-19/ հետևանքով առաջացած դժվարությունները, շահառուների

թվաքանակի պակաս լինելը, որոշ ծախսային հոդվածներով փաստացի պակաս ծախս կատարելու, գնման ընթացակարգերի (մրցույթների) պլանավորված ժամանակին չկայանալու կամ չամփոփվելու և համապատասխան պայմանագրերը ուշ կնքելու հանգամանքները:

Արդյունքում ՀՀ նախարարության կողմից իրականացված թվով 79 միջոցառումներից թվով 63 դեպքերում տարեկան ճշտված պլանի նկատմամբ եղել են թերակատարումներ, ընդ որում թվով 20-ի դեպքում ճշտված պլանով նախատեսվել է ավելի ցածր ցուցանիշ, քան տարեկան հաստատված պլանը, այսինքն կատարվել է հաստատված պլանի նվազեցումներ ընդհուպ մինչև նախատեսվածի 2.1%-ից մինչև 79.5%, իսկ թվով 30-ի դեպքում տարեկան պլանի նկատմամբ ճշտված պլանի փոփոխություններ չեն եղել, թվով 5 միջոցառումների դեպքում կատարվել է հաստատված պլանի նկատմամբ ճշտված պլանի ցուցանիշի ավելացում 5.4%-ից մինչև 639.0%-ի չափով, ինչպես նաև թվով 6 նոր միջոցառումներ, այսինքն երբ հաստատված բյուջեով տարեկան պլանավորում չէր իրականացվել, սակայն ճշտված պլանով սահմանվել են նոր միջոցառումներ և նախատեսվել են գումարներ: Հատկանշական է, որ դրանցից ճշտված պլանի նկատմամբ մի շարք դեպքերում նույնպես առկա են թերակատարումներ, այն դեպքում, երբ տարեկան հաստատված պլանը զգալի չափով նվազեցվել էր: Այսպես օրինակ

- 1068-12003- Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն- Տարեկան պլանը կազմել է 526,760.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 344,506.0 հազ. դրամ, նվազել է 34.6%-ով: Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 97.9 -%: Հաշվետու ժամանակաշրջանում շահառուների թվաքանակ պլանավորվել է 1088, ճշտված պլանը կազմել է 458, փաստացին կազմել է 414: Շահառուների թվաքանակի և արժեքային ցուցանիշների պակաս լինելը շահառուների դիմելիությամբ է պայմանավորված: Համաձայն հաշվետվություն ձև 2-ի հաշվետու ժամանակաշրջանում փաստացի ծախսը և դրամարկղային ծախսերը համընկնում են և կազմել են 337,259.14 հազ. դրամ:
- 1068-12005- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում- Տարեկան պլանը կազմել է 207,500.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 109,487.7 հազ. դրամ, նվազել է 47%-ով: Հաշվետվություն ձև 2-ում դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 102,407.7 հազ. դրամ, Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 93.5%:

Դրամարկղային ծախսի 9 ամիսների կատարման %-ը 9 ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել էր 49.96 %, այն դեպքում երբ ինն ամիսների ճշտված պլանը 57,412.3 հազ. դրամով ավելի եղել, քան տարեկան ճշտված պլանն է, այսինքն ինն ամիսների ճշտված պլանը տարեկանից ավելի է եղել 34.4 %,-ով: Տարեկան պլանով նախատեսվել է սպասարկել 1000 շահառու, ճշտված պլանով՝ 541, փաստացի սպասարկվել է 526-ը, ընդ որում 9 ամիսների ճշտված պլանով նախատեսվել էր սպասարկել 800 շահառու, փաստացի սպասարկվել է 438-ը:

- 1011-11003- Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում- 2020թ. համար պլանավորվել է 97,083.0 հազ. դրամ: Ճշտված պլանով՝ 33,680.0 հազ. դրամ, նվազել է 65.3%-ով: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 10,738.0 հազ. դրամ: Փաստացի ծախսի գումարը ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 31.9 % , ընդ որում 9- ամիսների համար հաշվետվություն ձև 2-ում նշված փաստացի ծախսի կատարման %-ը 9-ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 5.4%, կատարման տեմպը ավելացել է 26.5%-ով (31.9-5.4):: Համաձայն ՀՀ կառ. 2014թ. Թիվ 1183-ն որոշման, համայքի ներսում փոխհատուցման գումարը՝ 200դրամ, համայքից դուրս՝ 300դրամ, առավելագույնը 10 այց օրական: Վճարումը կատարվում է համաձայն ներկայացվող կատարողական ակտերի: Ծրագիրը բյուջե է ընդգրկվել 2020թվականին: 9-ամիսների համար պլանավորել է 241501 տնայցերի թիվ՝ փաստացի կատարել է 65000 տնայց:
- 1206-11001-Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագիր- Ծրագրի ընթացքում Խորհրդատվական ծառայությունների շրջանակում իրականացվել է՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման, շինարարության նկատմամբ հեղինակային, ինչպես նաև շինարարական և շին-վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության աշխատանքներ: Շին. աշխ. կատարման ժամկետները տարածքների հատկացման ուշացմամբ պայմանավորված երկարաձգվել են, որի պատճառով էլ ծրագրի կատարման ժամկետները 2 տարով երկարաձգվել են մինչև 30.11.2022թ.: 2015-2020թթ.. ընթացքում կնքվել է 19 պայմանագիր, որից 3-ը՝ 2020թ-ին՝ 12,444,668 դրամով գումարով 2 պայմանագիր «Արման Թաման» ՍՊԸ-ի հետ և 1 պայմանագիր «Միքնար» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրեր է կնքվել նաև անհատ խորհրդատուների հետ /գնումների մասնագետ, ծրագրի ինժեներ, գնահատման մասնագետ և այլն/: Խորհրդատվական ծառայությունների

համար իրականացվել է 168,140,272 դրամի ծախս, իսկ այլ ծառայությունների ձեռքբերման համար 1,415,700 դրամի ծախս: Տարեկան պլանը կազմել է 1,060,933.5 հազ. դրամ, իսկ տարեկան ճշտված պլանը 217,898.1 հազ. դրամ՝ նվազել է 79.5%-ով: Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 77.8 -%:

- 1206-32001- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգում-Շին. աշխ-ի կատարման ժամկետները շին. տարածքների հատկացման ուշացմամբ պայմանավորված երկարաձգվել են, որի պատճառով էլ ծրագրի կատարման ժամկետները 2 տարով երկարաձգվել են մինչև 30.11.2022թ.: 2020թ. ընթացքում աշխատանքների կատարման ընթացքի վրա անդրադարձել է նաև կորոնավիրուսի հետ կապված ՀՀ-ում իրականացված միջոցառումները: 2019-2020թթ ընթացքում ՍԾՏԿ-երի կառուցման, վերանորոգման և վերակառուցման համար կնքվել է 13 պայմանագիր, որից 6-ը՝ 19թ.-ն 661,256,380 դրամ և 7-ը՝ 2020թ.-ն՝ 1,224,823,243 դրամ արժեքներով, որից 625,785,075 դրամ գումարով 2 պայմանագիր է կնքվել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի, 219,188,000 դրամ գումարով 2 պայմանագիր կնքվել է «Աշկար»ՍՊԸ-ի հետ, 198,880,000 դրամ գումարով 1 պայմանագիր կնքվել է «Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի հետ, 1 պայմանագիր 119,549,946 դրամ գումարով կնքվել է «Բազալտ-ԷՄ» ՍՊԸ-ի և 1 պայմանագիր 61,420,220 դրամով կնքվել է «Բիդեք» ՍՊԸ-ի հետ Շին աշխատանքները ընթացքում են և նախատեսվում է դրանք ավարտել 2021-2022թթ ընթացքում: Տարեկան պլանը կազմել է 2,298,014.2 հազ. դրամ, իսկ տարեկան ճշտված պլանը 1,156,244.1 հազ. դրամ, այսինքն նվազել է 49.7%-ով: Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 68.6 -%:

Առկա է դեպք, երբ հաստատված բյուջեով և ճշտված պլանով սահմանված է գումար՝ 1,440. հազ. դրամ, սակայն դրամարկղային և փաստացի ծախս չի կատարվել /1141-12007 բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն/, որը հիմնավորվում է նրանով, որ մանկատան շրջանավարտները հիմնականում ստացել են բնակարանի ձեռքբերման վկայագրեր, ուստի բնակարանի վարձակալության անհրաժեշտություն դեռևս չի եղել:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի տարեկան ֆինանսական ցուցանիշների կատարողականների վերլուծությունն

իրականացնելիս անհրաժեշտ է նաև իրականացնել նախորդիվ իրականացրած 3,6 և 9 ամիսների համար հաշվեքննության արդյունքերի համեմատական բնութագրերը: Մասնավորապես,

Ինն ամիսների պլանը կազմել էր 22,322,700.7 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 15,682,590.32 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել էր 6,640,110.38 հազ. դրամի նվազեցում 29.75%-ի չափով:

Դրամարկղային ծախսը կազմել է 9,457,667.23 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 6,224,923.09 հազ. դրամ, կատարման տոկոսը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 60.31 %: Փաստացի ծախսը կազմել է 10,981,152.27 հազ. դրամ, դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը կազմել է 1,523,485.04 հազ. դրամ, փաստացի կատարման տոկոսը հաշվի առնելով փաստացի ծախսը /կատարողականը/ ճշտված պլանի նկատմամբ կկազմի 70.02 տոկոս: Դեբիտորական պարտքը կազմել է 1,527,312.45 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը՝ 1,051,552.31հազ. դրամ:

Ինն ամիսների համար արձանագրվել էր Ձև-2 հաշվետվության ցուցանիշների անհամապատասխանություն, մասնավորապես ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված Ձև-2 հաշվետվությամբ թվով 8 միջոցառումների մասով նշված փաստացի ծախսերի ցուցանիշը 167,294.39 հազ. դրամի չափով չէր համապատասխանել ինն ամիսներում փաստացի կատարված աշխատանքներին: Ինն ամիսների ընթացքում, առաջին կիսամյակի 19 ծրագրային միջոցառումների փոխարեն, առկա էր 8-ը՝ 11-ով պակաս, սակայն արժեքային արտահայտությամբ՝ 13,265.7 հազ. դրամով ավելի:

Առաջին կիսամյակի պլանը կազմել է 14,356,732.3 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 9,828,433.6 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 4,528,298.7 հազ. դրամի նվազեցում 31.5%-ի չափով:

Դրամարկղային ծախսը կազմել է 5,359,606.4 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 4,468,827.2 հազ. դրամ, կատարման տոկոսը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ կազմում է 54.5%: Փաստացի ծախսը կազմել է 6,535,446.9 հազ. դրամ, դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը կազմել է 1,175,840.5 հազ. դրամ, փաստացի կատարման տոկոսը հաշվի առնելով փաստացի ծախսը /կատարողականը/ ճշտված պլանի նկատմամբ կկազմի 66.0 %:

Վեց ամիսների համար արձանագրվել էր Ձև-2 հաշվետվության ցուցանիշների անհամապատասխանություն, մասնավորապես ՀՀ ֆինանսների

նախարարություն ներկայացված ՁԵ-2 հաշվետվությամբ թվով 19 միջոցառումների մասով նշված փաստացի ծախսերի ցուցանիշը 154,028,69 հազ. դրամի չափով չէր համապատասխանել վեց ամիսներում փաստացի կատարված աշխատանքներին: Միևնույն ժամանակ 1-ին եռամսյակում արձանագրվել էր թվով 18 ծրագրային միջոցառումներ՝ 86,641.88 հազ. դրամի կատարողականների չափով, որոնք չէին ընդգրկվել առաջին եռամսյակի համապատասխան ծրագրերի ՁԵ-2 հաշվետվությունների փաստացի ծախսերի ցուցանիշներում: Սակայն 1-ին կիսամյակում, առաջին եռամսյակի 18 ծրագրային միջոցառումների փոխարեն, առկա է 19-ը՝ 1-ով ավելի, իսկ արժեքային արտահայտությամբ՝ 67,386.81 հազ. դրամով ավելի:

Առաջին եռամսյակի պլանը կազմել է 5,803,967.2 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 4,093,028.32 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 1,710,938.88 հազ. դրամի նվազեցում 29.5%-ի չափով:

Դրամարկղային ծախսը կազմել է 2,198,748.98 հազ. դրամ: Դրամարկղային ծախսի և ճշտված պլանի տարբերությունը կազմել է 1,894,279.34 հազ. դրամ, կատարման տոկոսը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 53.7%: Փաստացի ծախսը կազմել է 3,052,071.94 հազ. դրամ, դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը կազմել է 853,322.96 հազ. դրամ, փաստացի կատարման տոկոսը հաշվի առնելով փաստացի ծախսը /կատարողականը/ ճշտված պլանի նկատմամբ կկազմի 74.6%: Դեբիտորական պարտքը կազմել է 2,014,378.99 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը՝ 848,568.77 հազ. դրամ:

Նախարարության 3,6 և 9 ամիսների և տարեկան հաշվեքննությունների ընթացքում արձանագրվել էին ճշված պլանի թերակատարումներ, մասնավորապես

- Առաջին եռամսյակում դրամարկղային ծախսի կատարման տոկոսը առաջին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել էր 53.7 տոկոս, փաստացի ծախսի կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 74.6 տոկոս:
- Վեց ամիսների դրամարկղային ծախսի կատարման տոկոսը վեց ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 54.5 տոկոս, փաստացի ծախսի կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 66.0 տոկոս:
- Ինն ամիսների դրամարկղային ծախսի կատարման տոկոսը ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 60.31 տոկոս, փաստացի ծախսի կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել 70.02 տոկոս:

- 2020 թվականի տարեկան դրամարկղային ծախսի կատարման տոկոսը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 90.03%, փաստացի ծախսի կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 91.78 տոկոս:

  Վերլուծելով նշված ցուցանիշները կարելի է փաստել, որ չնայած ըստ եռամսյակների համամասնությունների հաստատված պլանների նկատմամբ ճշտված պլանների նվազեցումների, տարվա արդյունքներով առկա է դրամարկղային և փաստացի ծախսերի կատարման ավելի բարձր ցուցանիշներ /90.03% և 91.78% /, քան նախորդ եռամսյակներում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի տարեկան ելքային ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերի ցուցանիշները և դրանց յուրաքանչյուրի մասով կատարողականների վերաբերյալ ամբողջական տվյալները և անհամապատասխանությունների վերաբերյալ նկատառումները ներկայացված է կից ներկայացվող թիվ 1 հավելվածով:

## 5 ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ընդհանուր առմամբ նախարարության կողմից ՀՀ պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարողականի նկատմամբ հաշվեքննությունների ընթացքում արձանագրվել էին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2–ում նշված ցուցանիշների անհամապատասխանություններ, մասնավորապես առաջին եռամսյակի համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 18 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 86,641.88 հազ. դրամի կատարողականների գումար, վեց ամիսների համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 19 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 154,028,69 հազ. դրամի կատարողականների գումար, ինն ամիսների համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 8 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 167,294.39 հազ. դրամի կատարողականների գումար: Նշված ժամանակաշրջանների ընթացիք եզրակացությունները կազմելիս արվել են առաջարկություններ նշված անհամապատասխանությունները, ինչպես նաև արձանագրված այլ փաստերը վերացնելու ուղղությամբ, որին ի պատասխան նախարարությունը տեղեկացրել է, որ ձեռնարկել է համապատասխան

միջոցներ՝ համապատասխան հրամաններ, հանձնարարականներ, արձանագրված անհամապատասխանությունները և թերությունները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում ուսումնասիրելով 2020 թվականի տարեկան կատարման ցուցանիշների համապատասխանությունը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն ՁԼ-2–ում նշված ցուցանիշների հետ, անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

## 6 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.

1. Միջոցներ ձեռնարկել նախարարության կողմից իրականացվող բյուջետային ծախսերի մասով պլանավորման ցուցանիշները առավել իրատեսական սահմանելու ուղղությամբ՝ պետական բյուջեով հաստատված ցուցանիշների և ճշտված պլաններով սահմանված ցուցանիշների էական տարբերությունները հնարավորինս բացառելու նպատակով:
2. Միջոցներ ձեռնարկել ՀՀ պետական բյուջեով սահմանված ծախսերի ծրագրային ցուցանիշների թերակատարումները հնարավորինս բացառելու ուղղությամբ: Մասնավորապես գնման գործընթացները և այլ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն իրականացնել պլանավորված պահանջարկի ժամկետների տրամաբանությամբ՝ պարտադիր հաշվի առնելով այդ գործընթացներում երևույթաբար առկա չկայանալու կամ ընթացքը բողոքարկելու <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով (ՀՕ-21), ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017 թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգով նախատեսված կարգավիճակները ու դրանց հետևանքում վրա հասնող ժամկետները:
3. Քննարկել «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 միջոցառման համար բյուջետային ծախսերի պլանավորման գործընթացում պետական համապատասխան մարմինների գումարները նախարարության բյուջեում ներառելու նպատակահարմարության հարցը, առավել ևս, որ այն հետագայում ՀՀ կառավարության որոշումներով վերաբաշխվում են բյուջետային համապատասխան այլ կարգադրիչներին:
4. Քննարկել 2019 թվականի դեկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 1919-Ն որոշման 9.1 հավելվածի

թիվ 9.1.20 աղյուսակի համաձայն թվով 3 միջոցառումների /1205-12004, 1205-12005, 1205-12007/ կատարողը նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը հանդիսանալու պարագայում՝ դրանք ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE և LSREP/ համակարգերի շտեմարաններից հանված ըստ կատարողների /ըստ ծրագրերի և միջոցառումների, նշելով հաստատված և ճշտված պլանները, փաստացի և փաստացի ծախսերը, կատարողականները և այլ տվյալներ/ տեղեկատվությամբ՝ որպես կատարող նախարարության բյուջեում ընդգրկվելու հանգամանքները և միաժամանակ իրականացնել մշտադիտարկում՝ հետագայում նշված անհամապատասխանություններ առաջանալու դեպքերում, ՀՀ ֆինանսների նախարարության հետ պարզաբանել դրանք:

5. Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա 2021 թվականի համար մշակել և հաստատել միջոցառումների/գործողությունների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման կատարման իրատեսական ու ողջամիտ ժամանակացույց ըստ պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումների և/կամ նախարարության ենթակա կազմակերպությունների՝ ներկայացնելով պատճենը ՀՀ հաշվեքննիչ պալատ: